ԵԴ/0648/11/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22 մարտի 2022 թվական ք.Երևան

Ուսումնասիրելով թիվ ԵԴ/0648/11/21 դատական գործով ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին դիմելու մասին Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի մարտի 15-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2021 թվականի օգոստոսի 2-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 19163319 քրեական գործով տուժող Սամվել Մխիթարյանի ներկայացուցիչ Ս.Մնացականյանի բողոքը՝ ՀՀ գլխավոր դատախազի անգործության դեմ:

2. 2021 թվականի օգոստոսի 2-ին դատական գործին շնորհվել է ԵԴ/0648/11/21 համարը և մակագրվել դատավոր Վ.Միսակյանին:

3. 2022 թվականի հունվարի 31-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վ.Միսակյանի որոշմամբ թիվ ԵԴ/0648/11/21 դատական գործն ըստ ընդդատության ուղարկվել է Լոռու մարզի

առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, և 2022 թվականի փետրվարի 11-ին մակագրվել դատավոր Վ.Սուղյանին:

4. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի մարտի 15-ի որոշմամբ, գործի ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար, դիմել է Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին:

5. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի մարտի 17-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Ըստ բողոքաբերի՝ 2019 թվականի սեպտեմբերի 13-ին ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ի և 3-րդ կետերի, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 19163319 քրեական գործը, որն ըստ քննչական ենթակայության ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչություն: Նախաքննության արդյունքներով ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնում 2020 թվականի դեկտեմբերի 4-ին և դեկտեմբերի 17-ին որոշումներ են կայացվել Ռաֆայել Մխիթարյանի և Տիգրան Մխիթարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ հանցակազմի բացակայության հիմքով:

6.1. Թիվ 19163319 քրեական գործով տուժող Սամվել Մխիթարյանի ներկայացուցիչ Ս.Մնացականյանը 2021 թվականի հունիսի 23-ին բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա վերացնել նախաքննության մարմնի՝ 2020 թվականի դեկտեմբերի 4-ի և դեկտեմբերի 17-ի «Քրեական հետապնդում չիրականացնելու մասին» որոշումները, կատարել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, Ռաֆայել Մխիթարյանի և այլոց կատարած արարքներին տալ ճիշտ քրեաիրավական գնահատական:

6.2. 2021 թվականի օգոստոսի 2-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել տուժող Սամվել Մխիթարյանի

ներկայացուցիչ Ս.Մնացականյանի բողոքը, որտեղ վերջինս, վերլուծելով թիվ 19163319 քրեական գործով ձեռք բերված ապացույցները, դրանք համադրելով միմյանց, եզրահանգել է, որ նախաքննության ընթացքում չի կատարվել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, պատշաճ ջանասիրություն չի ցուցաբերվել բոլոր հնարավոր ապացույցները ձեռք բերելու հարցում, ինչի արդյունքում կատարված հանցագործությունը չի բացահայտվել և հապճեպ կայացվել է կարճման որոշում: Տուժողի ներկայացուցիչ Ս.Մնացականյանն իր բողոքում նշել է նաև, որ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված բողոքում հայտնել է նոր երևան եկած հանգամանքի մասին, սակայն իր բողոքը, ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Ա.Գրիգորյանի՝ 2021 թվականի հուլիսի 1-ի գրության համաձայն՝ ուղարկվել է Լոռու մարզի դատախազի քննարկմանը, որտեղ նշված մարզի դատախազության դատախազ Տ.Քոթանջյանը կայացրել է «Վարույթ հարուցելը մերժելու մասին» որոշում:

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հունվարի 31-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) թիվ 19163319 քրեական գործով որպես վարույթն իրականացնող մարմին հանդիսացել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության Ստեփանավանի քննչական բաժնի քննիչը (պետը), նշված քրեական գործի նկատմամբ դատախազական հսկողություն է իրականացնում ՀՀ Լոռու մարզի դատախազությունը, սակայն վարույթն իրականացնող մարմնի որոշումների դեմ բողոքը ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազին, այնուհետև՝ «ՀՀ գլխավոր դատախազի անգործության դեմ» վերտառությամբ բողոք է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:*

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն փաստը, որ վարույթն իրականացնող մարմինը հանդիսանում է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության Ստեփանավանի քննչական բաժնի պետը, որի որոշումները բողոքաբերի կողմից վիճարկվել են ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված բողոքով՝ Դատարանը գտնում է, որ սույն բողոքն ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, և այն պետք է

ուղարկել ըստ տարածքային ընդդատության՝ վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի՝ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (…)»:

8. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի մարտի 15-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարանին ընդդատյա են հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները, և հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ ներկայացված բողոքները:*

Տվյալ դեպքում բողոքաբերն իր բողոքով վիճարկում է ոչ թե վարույթն իրականացնող մարմնի վերը թվարկված որևէ որոշում, այլ ՀՀ գլխավոր դատախազի անգործությունը, գտնելով, որ իր բողոքի քննության արդյունքում ՀՀ գլխավոր դատախազը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով, օգտվելով իր բացառիկ իրավունքից, անձամբ պետք է որոշում կայացներ, որը սակայն չի կատարել:

Նկատի ունենալով, որ ՀՀ գլխավոր դատախազության գտնվելու վայրը Երևան քաղաքն է, Դատարանը գտնում է, որ բողոքն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին (…)»:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

9. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. թիվ ԵԴ/0648/11/21 դատական գործն ընդդատյա՞ է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

10.1. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[1]*:*

11. Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[2]*:*

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության,*

---

[1] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[2] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[3]*:*

13. Վճռաբեկ դատարանն անդրադառնալով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հիմնախնդրին, մի շարք որոշումներով դիրքորոշում է արտահայտել է առ այն, որ. *«(…) մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական բողոքարկման առարկան անմիջականորեն քրեական հետապնդման մարմինների որոշումները, գործողությունները կամ անգործությունն են, եթե դրանց դեմ բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից՝ անկախ նրանից, թե դատախազական հսկողության շրջանակներում դատախազի կողմից քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված ակտեր են կայացվել, թե դրսևորվել է անգործություն: Ընդ որում, այս դեպքում դատական վերահսկողության առարկան քրեական հետապնդման մարմնի՝ որոշումը, գործողությունը կամ*

[3] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

անգործությունն է, այլ ոչ թե դատախազական հսկողության արդյունքում կայացված դատավարական ակտը կամ դրսևորված անգործությունը[4]»:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:*

(…)

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում»:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոքի չի կարելի զրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դատարանը, պարզելով, որ ստացված գործն ընդդատյա չէ իրեն, այն ուղարկում է ըստ ընդդատության (…)»:*

---

[4] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *«Էքսպերտ լաբորատորիա»* ՍՊԸ-ի գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԱՔԴ/0031/11/14 որոշման 16-րդ կետը, *Էրիկ Աբգարյանի* գործով 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԱՆԴ/0018/11/17 որոշման 16.4-րդ կետը, *Արմեն Տեր-Սահակյանի* գործով 2021 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ ԵԴ/0149/11/19 որոշման 15.1-16-րդ կետերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Գործն ըստ ընդդատության ստացած առաջին ատյանի դատարանը որոշում է կայացնում այն Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա ընդդատությանը:*

(…)

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահը գործը Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը»[5]:

16. Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ստացված դատական գործերի տարածքային ընդդատությունը պայմանավորված է անձի իրավունքներին և օրինական շահերին անմիջականորեն միջամտող որոշում կայացրած մարմնի գտնվելու վայրով, անկախ այն հանգամանքից, թե դրա բողոքարկման արդյունքում դատախազական հսկողության շրջանակներում կայացվել է որևէ դատավարական ակտ, թե դրսևորվել է անգործություն: Այսինքն, տարածքային ընդդատության կանոնները պետք է որոշվեն վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրով:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության Ստեփանավանի քննչական բաժնում քննվող թիվ 19163319 քրեական գործով 2020 թվականի դեկտեմբերի 4-ին և դեկտեմբերի 17-ին որոշումներ են կայացվել քրեական հետապնդում չիրականացնելու մասին: Նշված որոշումների հետ համաձայն չլինելով, տուժող Ս.Մխիթարյանի ներկայացուցիչ Ս.Մնացականյանը 2021 թվականի հունիսի 23-ին բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին: Ըստ բողոքաբերի՝ իր բողոքն ուղարկվել է Լոռու մարզի դատախազի քննարկմանը, որտեղ նշված մարզի դատախազության դատախազ Տ.Քոթանջյանը կայացրել է «Վարույթ հարուցելը մերժելու մասին»

---

[5] Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում քննվող դատական գործերի նկատմամբ նշված դրույթների կիրառելիության վերաբերյալ մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սամվել Ղազարյանի* գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0018/11/17 որոշումը:

որոշում[6]: Գտնելով, որ ՀՀ գլխավոր դատախազը դրսևորել է անգործություն, տուժող Ս.Մխիթարյանի ներկայացուցիչ Ս.Մնացականյանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ, 7-րդ, 21-րդ և 290-րդ հոդվածների դրույթները, բողոք է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Հաշվի առնելով այն փաստը, որ վարույթն իրականացնող մարմինը հանդիսացել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության Ստեփանավանի քննչական բաժնի պետը, որի որոշումները բողոքաբերի կողմից վիճարկվել են ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված բողոքով, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գտել է, որ հիշյալ բողոքն ընդդատյա չէ իրեն, և այն ըստ տարածքային ընդդատության ուղարկել է վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի՝ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Արձանագրելով, որ տվյալ դեպքում բողոքաբերը վիճարկում է ոչ թե վարույթն իրականացնող մարմնի որևէ որոշում, այլ ՀՀ գլխավոր դատախազի անգործությունը, իսկ ՀՀ գլխավոր դատախազության գտնվելու վայրը Երևան քաղաքն է, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գտել է, որ բողոքն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-16-րդ կետերում շարադրված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո, գտնում եմ, որ սույն գործի տարածքային ընդդատությունը պետք է որոշվի՝ անձի իրավունքներին և օրինական շահերին անմիջականորեն միջամտող՝ 2020 թվականի դեկտեմբերի 4-ի և դեկտեմբերի 17-ի «Քրեական հետապնդում չիրականացնելու մասին» որոշումները կայացրած մարմնի՝ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության Ստեփանավանի քննչական բաժնի գտնվելու վայրով, անկախ այն հանգամանքից, թե նշված որոշումների բողոքարկման արդյունքում դատախազական հսկողության

[6] Տե՛ս սույն որոշման 6-6.2-րդ կետերը:

շրջանակներում կայացվել է որևէ դատավարական ակտ, թե դրսևորվել է անգործություն:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ թիվ ԵԴ/0648/11/21 դատական գործն ընդդատյա է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԵԴ/0648/11/21 դատական գործն ընդդատյա է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ